Արձանագրություն N 5

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի՝ էլեկտրոնային եղանակով անցկացված արտահերթ նիստի

ք.Երևան 10 հոկտեմբերի 2019թ.

Նախագահ՝ Էրիկ Գրիգորյան

Քարտուղար՝ Սեդրակ Ղազարյան

Մինչև 09.10.2019թ. քվեարկել են խորհրդի 10 անդամներից 9-ը:

Դեմ են քվեարկել՝ Գ.Բալումյանը, Ս.Ադամյանը:

Չի քվեարկել՝ Ա.Ամիրխանյանը:

ՕՐԱԿԱՐԳ

Հավանություն տալ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից անցկացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի N 1343-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին:

2019թ. հոկտեմբերի 7-ին խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին է ուղարկվել «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից անցկացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի N 1343-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը՝ դրան կողմ կամ դեմ լինելու վերաբերյալ քվեարկություն կատարելու նպատակով: Մինչև 09.10.2019թ. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի էլեկտրոնային հասցեին ստացվել են քվերակության արդյունքները, որից խորհրդի 10 անդամներից 7-ի կողմից ուղարկվել է «կողմ եմ» և 2-ի կողմից «դեմ եմ» բառերը: ՀՀ կառավարության 2019թ. օգոստոսի 8-ի թիվ 1000-Ն որոշման 2-րդ հավելվածի 19-րդ կետի համաձայն հեռակա քվեարկությունը համարվում է կայացած:

Խորհուրդը որոշեց հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից անցկացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի N 1343-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին՝ 7 կողմ ձայնով:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ, ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ԷՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ՍԵԴՐԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ**